ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ն ՀՀՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/10 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	«Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ	Համազգեստ 1 (լրակազմ)	Համազգեստ 1 (լրակազմ)	«Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ	Բաճկոն՝ մուգ կապույտ 92% նայլոն, 8% լայկրա կտորից, կոճկվում է կենտրոնական շղթայով: Բաճկոնին ամրացված է կարգավորվող գլխանոց: Դիմային մասում երկու կողային կտրվածքով գրպաններով՝ շղթայով կոճկվող: Բաճկոնի ներսի մասից ներկարված ծոցագրպանով: Կրծքամասի աջ մասում ամրացվում է «ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» անվանումը, իսկ ձախ մասում՝ պրոբացիայի ծառայողի անվան առաջին տառը և ազգանունը: Ուսադիրների շրջանում՝ երկու փակօղակներ և երկու կամրջակներ՝

						ուսադիրների ամրացման համար: Ձախ թևի ուսակարից 10 սմ ներքև՝ ամրացվում է պրոբացիայի ծառայության խորհրդանիշը՝ 9 սմ շառավղով, տաբատ՝ մուգ կապույտ 92% նայլոն, 8% լայկրա կտորից, ուրվագիծը՝ ուղիղ,երկու կողային գրպաններով, հետնամասում երկու ներկարված գրպաններով: Գոտին՝ երկու կողքերից էլաստիկ ժապավենով ձգվող: Գոտկատեղից 30 սմ ներքև, երկու ոտքերին ներկարված գրպաններով՝ փակվող շղթայով: Տաբատը՝ շղթայով փակվող, գոտին կոճկվում է կոճակ-օղակով, գոտու վրա 6 հատ գոտեմակօղերով, շապիկ՝ մուգ կապույտ գույնի կտորից՝ (95-տոկոսանոց բամբակ, 5-տոկոսանոց լայկրա) ±3%: Շապիկն արտադրվում է ուղիղ ձևվածքով, կարճաթև, վզամասը մշակված է 2 սմ լայնության տրիկոտաժե մանժետով՝ եզրագծված 4-5 մմ լայնության կրկնակի զարդակարով, շապիկ (պոլո)՝ մուգ կապույտ, բաղկացած առաջամասից, կոկետկայով թիկունքամասից, կարճ թևքերից և

						ծալովի օձիքից: Կրծքամասում՝ 3 կոճակ, ուսագլուխների հատվածում ունի ուսադիրների համար նախատեսված լեզվակ: Շապիկը արտադրվում է երկու տեսակի գործվածքից, ընդ որում ուսամասերը և թիկունքային հատվածը՝ մինչև կոկետկան, միմյանիցից առանձնացված մոխրագույն բարակ ժապավենով, մշակված է 210 գրամ մակերեսային խտությամբ 92% նեյլոնե և 8% լայկրա բաղադրությամբ գործվածքից, իսկ մնացած մասերը՝ նույնպես 210 գրամ մակերեսային խտությամբ, 95% բամբակյա և 5% լայկրա բաղադրությամբ գործվածքներից: Թևքերի մանժետները մշակված է 2.2-2.5սմ լայնության էլաստիկ ժապավենով, իսկ շապիկի ստորին հատվածը նույնպես մշակված է 5.0-5.5 սմ լայնության էլաստիկ ժապավենով: Շապիկի կրծքամասի աջ կողմում ամրացվում է «ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» անվանումը, ձախ կողմում՝ պրոբացիայի ծառայողի անվան առաջին տառը և ազգանունը: Շապիկի ձախ թևքին՝

						ուսակարից 10 սմ ներքև ամրացվում է Պրոբացիայի ծառայության խորհրդանիշը 9 սմ շառավղով, գլխարկ (կեպի)՝ մուգ կապույտ երանգի «Ռիպստոպ» տեսակի 235 գրամ մակերեսային խտությամբ, 44% բուրդ, 54% պոլիէսթեր և 2% լայկրա բաղադրությամբ գործվածքից: Գլխարկը կազմված է կոշտ հովհարից, միջնամասից, կողամասերից, հատակից: Հովհարը կլորավուն, երկարությունը միջնամասում 7,2սմ (±2մմ): Հովհարին միջադրված է 3 մմ հաստության պլաստմասե միջադիր: Գլխարքաբոլորքի և կողային մասերի ամրությունը ապահովելու համար ներսի կողմից մշակված է սև գույնի դուբլիրինե շերտով: Գլխարկի ներսի կողմից եզրով մշակված է 3սմ լայնության կտորե շերտ: Գլխարկի հետևի մասում տեղադրվում է մետաղական ճարմանդ չափսը կարգավորելու համար: Գլխարկի գագաթին մշակված է 14-16 մմ տրամագծով մետաղական կոճակ՝ երեսպատված նույն գործվածքով: Ճակատային մասում ամրացվում է

					պրոբացիայի ծառայության խորհրդանիշը՝ 5 սմ շառավղով: Պրոբացիայի ծառայության խորհրդանիշը, պրոբացիայի ծառայողի անվան առաջին տառը և ազգանունը և չափսերը կտրամադրվեն Պատվիրատուի կողմից նախապես ներկայացվող հայտով:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

И / П Армине Овсепян Элбек в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/10 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
1	-	-	-	-	-